Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Gaunt Gh
Kurnool

891.99
9-28

15 NOV 2011

243

ՎԼՏԱՐԱՆԴՈՒ

Бедикян
Библиотека

# ՎԱՅՐԻ ՎԱՐԴԵՐ

ԲԱԳԻՒ

ՓԵՏՐՎԱՐԵԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻՆ

ՎԱՌՆԱ.

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

1905

891.99
Ղ-28

891.99 | Ա1906-59
Ղ-28 | Ղարիբ Ասատուր
Հայրի վարդեր

| | | | |
|---|---|---|---|
| 1111 | 1183 | 4/8 | 80 |

ՎԱՏԱՐԱՆԴՈՒ

# ՀԱՅՐԻ ՎԱՐԴԵՐ

ԲԱԳԻՒ

ԵՏՐՎԱՐԵԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԻՆ

ՎԱՌՆԱ

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

1905

16 JUL 2013
48729



## ՂԱՐԱԲԱՂԻ ԻԳԻՏ ԲԱՂԷՔ

Ղարաբաղի իգիդ բաղէք
Ձէռ սարերիցդ մեզ թըռէք,
Ղարաբաղի թուխ թուխ բաղէք
Շուտ իմոատի մեզ հասէք։

Աղուէսն ու գէլ մեծ ջարդ տըւին
Մեր անպաշտպան գառներին,
Աղուէսն ու գէլ զըլում բերին
Հայի մալին ու մուլքին։

Ղարաբաղի հայ բաղէներ,
Մնցէ՛ք սարե՞ր ու ձորեր
Մեզի թըռէք, որ մեր խըմբեր
Քըշէք չիտակ դուշմաններ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
Ա. ԱՄ. Ա. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
21906-59

## ՍՈՒԳՆ ՈՒ ՇԻՎԱՆ

Սուգն ու շիվան չորս դին բըռնել
Սի՛ըտ բերէք որ դիմանայ,
Սուգն ու շիվան երկինք հասել
Հա՛յ գլուխք որ դիմանայ։

Հայո՞ց սարեր, ժէռո՞տ սարեր,
Ժէռ թեւերըդ փոխ տըւէք,
Հայո՞ց սարեր, ամպո՞տ սարեր
Շանթ ու կայծակ մեզ տըւէք։

Մեր քուրըտիքն ու աղբըրտիք
Նամա՛ըտ գուշմանն է զարկել,
Հայո՞ց սարեր, կըռնակ կացէք
Տըղերք համբայեն ընկել...

## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Г. Бенкян
Библиотека

Ծովացա՛ծ Սուգի այս ոե՛ւ օրերում.
Պոռնիկորդի՛ է ամէ՛ն Հայ անհաս,
Ո՛վ վրէժխընդիր լինել չի՛ երդում
Վիճակին առաջ Ազգին յուսահաս,
Ո՛վ խոհեմութիւն է դեռ բարբանջում,
Ո՛վ մեղադրում ցեղափոխութեան,
Եւ ո՛վ կուրծք-կուրծքի դեռ չի պահանջում
Արդար իրաւունքն Հայ Անկախութեան։

# ՀԱՅ ԵՐԳՉԻՆ

Էլ մի՛ երգիր, սիրոյ երգեր, հա՛յ երգիչ,
Մեր ձորերում վարդ ու բլբուլ չը մընաց,
Քո երգերն է՛լ մեզ համար չեն բորբոքիչ՝
Արնո՞տ երկրում երիտասարդ չը մընաց։

Էլ մի՛ երգիր սուգի երգեր, հա՛յ երգիչ.
Մեր աչքերում է՛լ արտասուք չը մընաց,
Քո երգերն է՛լ մեզ համար չեն ամոքիչ՝
Մեր քայլին տակ անթաղ դեռին չը մընաց։

Սէրն ու Բաղտը խաղաղ կեանքին են յարմար,
Մենք սի՛րա չունինք, մենք տո՛ն չունինք, հա՛յ երգիչ,
Սուգն էլ նորան՝ ո՛վ ապրելու է երկար,
Ողջ Ազգին մահ է ըսպառնում, հա՛յ երգիչ։

Արո՞ն քըսիր սիրոյ, սուգի լարերին,
Արո՞ն կուզենք, կարմի՛ր արո՛ն, հա՛յ երգիչ.
Արնոտ երգը մեր ածխացած սըրտերին
Լինելու է և բալասան և փրկիչ։

Ու գեղից-գեղ, քաղքից-քաղաք մեն գալով
Արնո՞տ երգեր հիւսիր ճամբից քո անցած,
Երկիրն անցիր — «Զարնել-զարկուել» — երգելով,
Որովհետեւ լոկ դա՛ բաժին մեզ մընաց։

# ՄԵԾ ՄԵԾ ՀԱՒՔԵՐ

Մե՛ծ մե՛ծ հաւքեր սեւ քարվանով
Մեր սարերով անց կացան,
Եարաբ էս խիստ բուք-բարանով
Էդ հաւքերը ո՞ւր կերթան։

Սե՛ւ սե՛ւ հաւքեր մենծ քարվանով
Սարե՛ր, դէպ ի վե՛ր կերթան,
Ա՛խ, էտ հաւքեր արնի հոտով
Դէպ ի Կասպից ծով կերթան։

Խումբ խումբ հաւքեր արնո՞տ կըտցով
Մեր սարերը եռ դարձան,
Մեր աղբերտանց սե՛լ արուունով
Հաւք ու դաշան կըշտացան։

Սըգո՞ր սարեր, դարդո՞տ սարեր,
Խաբար տըւէք Աստըծուն,
Հայո՞ց սարեր, եթո՛ւմ սարեր
Գանդատ արէք Աստըծուն։



# ՍԱ՛Ր ՍԱ՛Ր ՑԱՒԵՐ

Սա՛ր սա՛ր ցաւեր. ծո՛վ ծո՛վ արուն
Եարաբ էս ի՞նչ օրեր են,
Խաչապաշտն էլ դուշման հայուն,
Եարաբ էս ի՞նչ դարեր են։

Է՛լ աշխարհքում, փուճ աշխարհքում
Հաւատ, օրէնք չը մընաց,
Է՛լ աշխարհքում, լիրբ աշխարհքում
Բարի ու չար չը մընաց։

Հա՛յ աղբըրտի՛ք, կուռ կըռան տանք,
Է՛լ խըղճմըտանք չը մընաց.
Գէլեր դառնանք, օձեր դառնանք,
Է՛լ ուրիշ ճար չը մընաց։

# ՂՕՆԱԽՆԵՐԸ

Ղօնախները ծո՛վ արնի մէջ
Սիպտակ սիպտակ լողկըցան,
Ղօնախները ալաֆին մէջ
Արնոտ արնոտ փուլ եկան։

Նամա՛րտ դուշման, ա՛խ, լի՛ըբ դուշման
Ցընեբից ի՞նչ ուզեցիր,
Անսի՛րտ դուշման, դաղա՛ն դուշման
Ծըծկերից ի՞նչ ուզեցիր։

Ղօնախները մէջի մարդով
Ալաֆին մէջ փուլ եկան,
Ղօնախները լաբը մարդով
Իրենց շէմբին հասըբուան։

Սաղ սաղ էրուած անմեղ հայեր,
Ձեր մեռելին մենք ղուրբան,
Թէ ձեր հայիֆ մենք չենք հաներ,
Նամարտ ընկինք քանց դուշման։



# ԱՐԻՒՆԸ ՍԵԼ ԿԱՊԱԾ ԿԵՐԹԱՐ

Արունը սել կապած կերթար
Հայերի տան առաջով,
Մ՚ի Հայ չըկար տանից դուրս գար
Դուշմընի դէմ թըվանքով։

Շատ, շատ եաման պըտի դառնար
Հալը մեր հայ աղբըրտանց.
Թէ Դուսմանը իմտատ չը գար
Եթում, եսսիր աղբըրտանց։

Դուսման աղբէր, սըրտիդ մատաղ
Մեր նամուսը փըրկեցիր,
Քեզ հետ հանող տըղոց մատաղ
Դուշմանը ետ քըշեցիր։

Մ՚ի Բաղտեցի հայ աղբըրտանք,
Թէ Դուսմանին մոռանաք,
Ուզածին չափ թըվանք չը տաք,
Դուք էլ դուշման կը դառնաք։

# Ա՜խ, ի՞նչ արիր

Ա՜խ, ի՞նչ արիր, վա՜խ, ի՞նչ արիր
Դառի մորթով գել աղբեր,
Մեր գըլխին ի՞նչ սե՛ւ ճուն բերիր
Նամա՛ըտ դուշման խաչ-աղբեր։

Եկեղեցիք թալան տըւիր,
Նամա՛ըտ դուշման, գո՛ղ դուշման,
Աղջիկ, աբղայ գիւլուլեցիր,
Անսի՛ըտ դուշման, լի՛ըբ դուշման։

Մեղքը վիզըդ, դուրս հանեցիր
Դո՛ւ մեզ անմեղ մեր ճամբից,
Դեհ, հիմի էլ ջառման քաշիր
Առուծ դառած Հայ տըղից։

Մեր արնի տեղ արուն կուզենք,
Նամա՛ըտ դուշման կըռւի կաց,
Ազա՜տ վառտակ, ապրուստ կուզենք
Ազա՜տ կեանք ու նիստ ու կաց։



# Հաղարներով

Հազարներով մենծ ու պըստիկ
Փոս փորեցին իրար քով,
Մենծ ու պըստիկ արընուըլիկ
Պառկեցըրին իրար քով։

Հարուստ, աղքատ, ա՜խ. դարդ դարդի
Տըւին, Բագւի աղբըրտանք,
Հարուստ, աղքատ արուն արնի
Թառնեցին, Հայ աղբըրտանք։

Ա՜խ. ե՞րբ մենք էլ պըտի կենանք
Դուշմընի դէմ քով քովի,
Ա՜խ. ե՞րբ պըտի ՀԷն ՀԷնի տանք
Տալղի ներման մե՛ւթ ծովի։

# ՀԱՐՈՒՍՏ ԱՂԲԵՐ

Մեր սարերը դումման հագան
Հարո՛ւստ աղբեր, հա՛յ աղբեր,
Մեր դաշտերը արուն հագան
Հարուս՛տ աղբեր, խո՛րթ աղբեր։

Խաչապա՛շն էլ դուշման դառաւ,
Հարո՛ւստ աղբեր, խելքի եկ.
Ջանիդ, մուլքիդ դուշման դառաւ
Հարո՛ւստ աղբեր, ճամբի եկ։

Փարէն քեզնից, ջանը մեզնից
Ազիզ կըռւի վեր կենանք,
Ջարկենք-ջարկվինք, շուն ու գելից
Ազատենք մեր հին վաթան,

Որ մեր սարեր արեւ հագնին
Շէն կեանքիդ հետ, հայ աղբեր,
Որ մեր դաշտեր ոսկի հագնին
Մալ-մուլքիդ հետ, ջան աղբեր։



# ԲՕՑԻՆ ՄԱՏԱՂ

Բոյին մատա՛ղ, դոշին մատա՛ղ
Է՛ն հայ տըղին, ջա՛ն տըղին,
Որ լալու տեղ կելլէ ղոչախ
Դոշ դէմ կըտայ դուշմընին։

Սըրտին մատա՛ղ, հոդուն մատա՛ղ
Է՛ն հայ տըղին, վա՛ռ տըղին,
Որ իր ջիվան կեանքը սաղ սաղ
Կը տայ թըրին ու գիւլլին։

Ճամբին մատա՛ղ, մատա՛ղ ձէնին
Է՛ն հայ տըղին, ժէ՛ռ տըղին,
Որ գիւլուլած լիրբ դուշմընին
Ցուն կը դառնայ իր եարին։

Դարդին մատա՛ղ, մատա՛ղ հոդին
Է՛ն հայ տըղին, խա՛ռ տըղին
Որ ընկած է ղէնքը ձեռին
Որբ վաթանի ուղուրին։

# ՎԱՅ Է՛Ն ՏՂԻՆ

Վա՛յ է՛ն տըղին, վա՛յ է՛ն տըղին,
Է՛ն հայ տըղին, խո՛րթ տըղին,
Որ սե՛լ արնի էս օրերում
Ջեռը ծալած է նըստում:

Թո՛ւք է՛ն տըղին, մի՛ւր է՛ն տըղին,
Է՛ն հայ տըղին, վա՛տ տըղին,
Որ եարի տեղ բոմբ ու մարթին
Հուպ չի՛ տալիս իր սըրտին:

Ցա՛ւ է՛ն տըղին, սե՛ւ է՛ն տըղին,
Է՛ն հայ տըղին, գե՛չ տըղին,
Որ չի կանգնում տըկերանց հետ
Դուշմընի դեմ գոչ-գոչի:

Դա՛ւ է՛ն տըղին, մա՛հ է՛ն տըղին,
Է՛ն հայ տըղին, չո՛ւն տըղին,
Որ ոխի տեղ նամարտաբար
Սէր ցուց կը տայ դուշմընին:



# ԱԶԻԶ ԲԱԼԷՍ

Ազի՛զ բալէս, նանի՛ ասեմ,
Որ քընիս չո՛ւտ մեծանաս,
Եվ ո՛ւմ Հային հավա՛ր ղըրկեմ,
Որ դու էնոր կեանքըդ տաս:

Զինարները քեզ բո՛յ կը տան,
Բոյի՛դ ղուրբան, քեզ նանի՛,
Հաստ մէշէքը քեզ ո՛ւժ կը տան
Ուժի՛դ ղուրբան, քեզ նանի՛:

Դէռ սարերը քեզ դո՛շ կը տան,
Դոշի՛ա ղուրբան. քեզ նանի՛,
Սարի հաւքեր քեզ սի՛րտ կը տան,
Սըրտի՛դ ղուրբան, քեզ նանի՛:

Սեւ ամպերը քեզ ձէ՛ն կը տան,
Ձենի՛դ ղուրբան քեզ նանի՛:
Կաժակները քեզ տեսք կը տան
Աչքի՛դ ղուրբան, քեզ նանի՛,



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մասիսյան

Հայ աղբերակը քեզ ձի՛ կը տան,
Զիո՛ւդ զուրբան, քեզ նաննի՛,
Լենքը բօմբ ու թրվանք կը տան
Զարկի՛դ զուրբան, քեզ նաննի՛։

Ու ձի նստած իմոտ՝ կերթաս,
Երթած սահթի՛դ ես զուրբան,
Թրվանքն ուսիդ հավա՛ր կերթաս,
Երթած ճամբի՛դ ես զուրբան։

Թէ տուն դառնաս դօշէ՛տ զարկուած.
Արնոտ շապկի՛դ ես զուրբան,
Մօրը՛դ դառնաս հոգիդ տրուած,
Անխօս դարձի՛դ ես զուրբան։

Թէ քեզ կրուի չօլում թաղեն
Հողէ բարձի՛դ ես զուրբան,
Թէ դայբ ըլլաս, դայբըդ գըրեն,
Ազիզ գըրի՛ն ես զուրբան։

Ա՛խ, էդ օրուան համար ժամում
Մի ջուխդ մոմ եմ ես վառել,
Մեծցի՛ր բալէ՛ս, մեր վախանում
Արունը ծո՛վ է կապել։



# ԱՍՏՂՈՒՆՔ ՇԱՏ ԵՆ

Աստղունք շա՛տ են, անո՛ւշ մէրիկ,
Հայի դարդերն է՛լ շա՛տ են,
Դովեր խո՛ր են, աղի՛ղ մէրիկ,
Հայի ցաւերն է՛լ խո՛ր են։

Գիշերն է մո՛ւթ, սըգա՛ր մէրիկ,
Հայի ճամբան է՛լ մո՛ւթ է.
Երթումը տէ՛ր չունի, մէրի՛կ,
Հայն էնդուց է՛լ անտէ՛ր է։

Դարդո՛ւ մէրիկ, ձիս բեր նըստիմ
Դմ աղբերատա՛նց քո՛վ երթամ,
Ա՛լ ձիս նըստիմ, վա՛ռ ձիս նըստիմ
Լի՛ըբ դուշմընին դէ՛մ երթամ։

# ԱՂԲԵ՛ՐՔ ՈՒՆԻՆՔ

Աղբե՛ր ունինք հարո՛ւստ ծընած,
Էնո՛նց մուլքի՛ն մենք զուրբա՛ն,
Տըղե՛ր ունինք գի՛ր կարդըցած,
Էնո՛նց զալմի՛ն մենք զուրբա՛ն։

Աղբե՛ր ունինք ժէռի՛ց ծընած,
Էնո՛նց գոշի՛ն մենք զուրբա՛ն,
Տըղե՛ր ունինք Եւրոպ նըստած,
Էնո՛նց գործքի՛ն մենք զուրբա՛ն։

Աղբե՛ր ունինք ազի՛զ մեռած
Էնո՛նց հոգի՛ն մենք զուրբա՛ն,
Տըղե՛ր ունինք կըռւի կեցած,
Էնո՛նց գիւլլի՛ն մեն զուրբա՛ն։

Չէ՛, քամրաղդ չե՛ս, հայի՛ վաթան,
Հոգի՛դ, ջըրի՛դ մենք զուրբա՛ն,
Գըռոշ չաժի՛ն Ցարն ու Սուլթան.
Աղա՛տ լուսի՛դ մենք զուրբա՛ն։



# ԲԱՆՁԸՐ ՍԱՐԵՐ

Բա՛նձըր սարեր, հօրա՛նց սարեր,
Ի՞նչ են չինում մեր տըղերք,
Ճամբայ ընկան հեռո՛ւ ձորեր,
Մեր քա՛ջ տըղերք, ջա՛ն տըղերք։

Դուշմընի՛ դէ՛մ ճամբայ ընկան
Մեր հա՛յ տըղերք, խա՛ս տըղերք,
Էրվա՛ծ սըրտով ճամբայ ընկան
Ջահի՛լ-ջիվա՛ն մեր տըղերք։

Ա՛խ, սարեր ջան, սուս էք անում
Ո՞ւր մընացին մեր տըղերք,
Արնո՛ւ կըռւում, ազի՛զ կըռւում
Զընի՞ ընկան մեր տըղերք...

# ՍԱՐՈՒ ՀԱՒՔԵՐ

Սարի՛ հաւքեր, արնի՛ հաւքեր,
Ընկերներով գընացիք,
Եա էք դառնում դուք անընկեր,
Մեր տըղերքն ո՞ւր մընացին։

Ելթումի պէս ուռիք կուլան
Արնո՛տ գետի զըրաղին,
Մեր տըղերանց մա՛հը կուլան
Արազի հետ միասին։

Սարի՛ հաւքեր, ա՛խ ե՛տ դառէք
Մեր տըղերանց մոտ թըռէք,
Սրտերն առէք ու ե՛տ բերէք
Ժէ՛ռ սարերին պահ տըւէք։



# ԱԶԻԶ ՄԷՐԻԿ

Ազի՛զ մէրիկ, երազ տեսայ
Մեր տըղերանց մոտն էի,
Դուշմընի դէմ կայնած տեսայ
Զեռիս մոսին ունէի։

Կըռուում էինք էրա՛ծ սըրտով,
Էրա՛ծ սըրտից երգ ասում,
Գիւլլում էինք հազարներով
Նամա՛ռտ դուշմանն իր տեղում։

Զե՛ս իմանում ինչքա՛ն, մէրի՛կ,
Երգն անո՞ւշ էր գիրքէ-գիրք,
Ա՛խ չե՛ս գիտում ինչքա՛ն, մէրի՛կ,
Մահն ազի՛զ էր գիրկէ-գիրկ։

Է՛ն գիշերից անքո՛ւն եմ ես,
Ցըրոց հարսալիմն եմ քաշում,
Է՛ն գիշերից մեռա՛ծ եմ ես
Արնի հարսալիմն եմ քաշում։

Էսօր, էգուց, է՛լ մէրիկ չան,
Ես ճամբո՛րդ եմ, մա՛ռտ ճամբորդ,
Դէպ ի՛ տըղե՛ռք, դէպ ի՛ կըռիւ,
Ես ճամբո՛րդ եմ, սե՛ռ ճամբորդ։

# ՏԷՐՏԷՐՆ ԱՍԱՒ

Տէրտէրն ասաւ- « Էլ մեղք չը կայ,
» Դուշմընի դէմ ոտք ելէք,
» Զարկէ՛ք-զարկէ՛ք, էլ մեղք չը կայ,
» Դուշմնի արուն թափեցէք։

» Մեղքն էնո՛ր է, դըժոխքն էնո՛ր,
» Ո՛վ դոշ չի տալ դուշմընին,
» Վարձքն էնո՛ր է, դըրախտն էնո՛ր,
» Ով զոհ կըլնի վաթանին։ »

Հա՛յ աղբըրտիք, ոտի՛ ելէք
Բոլ բոլ արուն թափելու,
Էլ մեղք չը կայ, ոտի՛ ելէք
Դուշմնի արուն թափելու։



# ԱՂՕԹՔ

Եարա՛ր, էս ո՞ր մեղքիս համար
Դու ինձ հալից գըցեցիր,
Քո ծառային խե՛ղճ ու խոնա՛րհ
Լա՛փ մըտիցդ հանեցիր։

Ա՛խ, սե՛լ աչնի էս օրերում
Տըղամարդին ամօթ չէ՞,
Զորս պատի մէջ իր դոշակում
Հոգին ձեռըդ աւանդէ։

Գեղի տէրտէրն անիծե՛ց մեղ
Ասաւ — « ելէ՛ք շուտ ոտի » —,
Եարա՛ր, մեղք եմ, խըղճա՛ վըրէս,
Եա թըվա՛նք տուր, եա օրդի։

# ՅԱԴ ՈՒ ԴԱՐԴԷՆ

Մեր երեսը ցա՛ւ ու դարդէ՛ն,
Հա՛յ աղբերրոտիք, մոմ կըտրաւ,
Մեր լուս աչքը սո՛ւգ-չիվանէ՛ն
Գիշերուան պէս խաւարաւ։

Ղօչա՛խ տըղերք, արո՛ւն բերէք
Մեր երեսին քըսելու,
Դուշմընի տա՛ք արո՛ւն բերէք
Մեր աչքին դէ՛զ անելու։

Արո՛ւն բերէք, որ չահիլնանք
Դուշմնի՛ արուն, հա՛յ տըղերք,
Արուն բերէք արե՛ւ տեսնանք
Տա՛ք տա՛ք արուն, խա՛ս տըղերք։



# ՏԸՂԵՐՔՆ ԵԿԱՆ

Տըղերքն եկան մեր գեղն իջան,
Էնոնց տեսքի՛ն ես մատաղ,
Հեռու հեռու քաղքից եկան,
Էնոնց ճամբի՛ն ես մատաղ։

Տըղերքն եկան մեր տունն իջան,
Էնոնց ոտի՛ն ես մատաղ,
Քըչո՛ր եկան, շատո՛ր կերթան
Սեւ քարվընի՛ն ես մատաղ։

Տըղերքն եկան տըղէս տարան
Ճըղիս սըրտի՛ն ես մատաղ,
Աղի՛ղ կըռւի տարան, կըռւին
Հազար տըղո՛վ ես մատաղ։

Տըղէս գընաց է՛լ ետ չեկաւ,
Թափած արնի՛ն ես մատաղ,
Հայի աղի՛ղ կըռւում ընկաւ
Պառկած չոլի՛ն ես մատաղ։

# ԱՐԱԶՆ ԵԿԱՒ

Արազն եկաւ դո՛ւրան դո՛ւրան,
Ուռիք չոքած վըրէն կուլա՛ն,
Հա՛յ աղբըրաիք հարուրներով
Արազի մէջ սուս կը լոլնան։

Արազն եկաւ արնո՛տ արնո՛տ,
Երկնուց հաւքեր եկան մեզ մօտ,
Արա՛զ, ծոցդ առ մեր աղբըրաիք,
Հաւքեր ինչան զըրազիդ մօտ։

Արա՛զ, չիտակ Եւրոպ գընա,
Տա՛ր Հայի բոլ մեռել հատեա՝
Հարս ու փեսայ. տըղեկ ու ծեր
Ու խմացիր ի՞նչ գիւման կայ։

Մենք է՛լ, Արա՛զ, դարդոտ Արազ՝,
Թողած եարը, գինին ու սազ,
Արընելու կերթանք նամարտ
Դուշմընին դէմ վրուազ վրուազ։



# ԵՍ ՀԻՒԱՆԴ ԵՄ

Ես հիւա՛նդ եմ, ազի՛զ մէրիկ,
Կաթիդ հետ ինձ դա՛ր տըւիր,
Ապրելու սիրտ չունիմ, մէրի՛կ
Ա՛խ, ինձ ինչո՞ւ կեանք տըւիր։

Ծընուած օրից ես գինով եմ,
Ա՛խ մէրի՛կ ջա՛ն, չ՛ես գիտում,
Հայի դարդով ես գինով եմ,
Մէրի՛կ, ինձ չե՛ս հասկանում։

Թո՛ղ ինձ երթամ, ազի՛զ մէրիկ,
Հայ տըղերանց քով երթամ,
Դուշմնի արուն թափեմ, հերիք
Հիւանդ սըրտով ես մնա դամ։

# ՇԱՐԱ՛Ն ՇԱՐԱ՛Ն

Շարա՛ն շարա՛ն խըմբեր կերթան,
Ճամբա՛յ տըւէք, ա՛յ սարեր,
Հա՛յ աղբըրտա՛նց իմոտ կերթան,
Պահպանեցէ՛ք, հա՛յ սարեր։

Ձեր հոգին ու հաւ.ք ճամբայ հանէք
Դէպ ի արնո՛տ կըռւի դաշտ,
Անդրանիկին խաբա՛ը պըրկէք
Թէ՝ կը հասնի շուտ իմոտատ։

Մեր խա՛ս տըղերք, մեր մա՛րտ տըղերք
Կըռւի կերթան, ա՛յ սարեր,
Լուս բերելու կերթան տըղերք
Ձե՛զ, խաւարա՛ծ հա՛յ սարեր։



# ՀԱՅ ԱՂԲԸՐՏԻՔ

Հայ աղբըրտիք, կըռւի՛ կացէք,
Մատը դընաց քի՛չ մընաց,
Ըռւող տըղերք, դոչա՛խ կացէք
Ազա՛տ օրուան քի՛չ մընաց։

Ա՛խ. ձեր գիւղի ձէնի՛ն մատաղ,
Անո՛ւշ տըղեքք, ջա՛ն տըղերք,
Վա՛խ, ձեր արնի գէօլի՛ն մատաղ
Ազի՛զ տըղերք, հայ տըղերք։

Ա՛խ. ի՞նչ արած, վա՛խ ի՞նչ արած
Ազա՛տ օրը հեչտ չի՛ գալ,
Դեր խե՛ղճ գըլխին ի՞նչ ձուն տըւած
Դառանց արնէ, ա՛խ, չի՛ գալ։

1р
8004



## ՑԱՆԿ

Նախերգանք . . . . . 3
Հայ երգչին . . . . . 5
Մեծ մեծ հաւքեր . . . . . 6
Սար սար ցաւեր . . . . . 7
Ղօնախներր . . . . . 8
Արիւնը սել կապած կեթար . . 9
Ախ, ի՞նչ արիր . . . . . 10
Հազարներով . . . . . 11
Հարուստ աղբեր . . . . . 12
Ղարաբաղի իգիդ բազէք . . 13
Սուգն ու չիվան . . . . . 14
Բոյին մատաղ . . . . . 15
Վայ էն արդին . . . . . 16
Ազիզ Բալէս . . . . . 17
Աստղունք չատ են . . . . . 19
Աղբերք ունինք . . . . . 20
Բանձրը սարեր . . . . . 21
Սարի հաւքեր . . . . . 22
Ազիզ մէրիկ . . . . . 23
Տէրտէրն տաւ . . . . . 24
Աղօթք . . . . . 25
Ցաւ ու դարդէն . . . . . 26
Տրղերք եկան . . . . . 27
Արազն եկաւ . . . . . 28
Ես հիւանդ եմ . . . . . 29
Շարան չարան . . . . . 30
Հայ աղբրրաթք . . . . . 31

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ—Арм.ССР
Ա. Մասիսյան
им. А. Масисяна

«Ազգային գրադարան»
NL0356599

48729